ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 03

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

03.02.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Աշրաֆյանը - մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Վ.Ղարսայանը, Ա.Մատինյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Ա.Մալոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը անդրադարձ կատարեց և ներկայացրեց նախկինում տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ իր դիտարկումները:

2. Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյանը ներկայացրեց բնակչության հետ հանդիպումների, գետերի հուների խնդրահարույց հատվածներում իրականացված մաքրման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, հայտնելով, որ դրանք ընթացիկ ժամանակաշրջանում պատշաճ կերպով չեն իրականացվել աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով:

Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը հանձնարարեց.

ա) Կազմել պլան-ժամանակացույց և կազմակերպել հանդիպումներ ազգաբնակչության հետ մարզի համայնքներում, տեղեկանալ առկա խնդիրներին, հնարավորինս լուծումներ տալ բարձրացված հարցերին, ներկայացնել ամենշաբաթյա գրավոր տեղեկատվություն:

բ) Սեղմ ժամկետում ներկայացնել Լոռու մարզի Փամբակ, Տաշիր, Ձորագետ և Դեբեդ գետերի խնդրահարույց հատվածներում իրականացված հուների և գետաբերուկների մաքրման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

3. Լոռու մարզպետի խորհրդական Ն.Թովմասյանը ներկայացրեց մարզպետի կողմից քաղաքացիների հետ բակային հանդիպումների ընթացքում բարձրացված մի շարք հարցերի (բազմաբնակարան շենքերի վերելակների, տանիքների, բակերի ասֆալտապատման և այլ հարցերի) վերաբերյալ տեղեկատվություն :

Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը հանձնարարեց.

Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանի հետ համատեղ ուսումնասիրել բակային շրջայցերի ժամանակ քաղաքացիների կողմից բարձրացված բոլոր հարցերը, առաջարկությունները և խնդիրները, համապատասխան գրություն ներկայացնել Վանաձոր համայնքի ղեկավարին բարձրացված հարցերի (մասնավորապես տանիքների և վերելակների նորոգման ու վերանորոգման, բակերի ասֆալտապատման, աղբահանության և այլն) վերաբերյալ, մասնակցել համատեղ ուսումնասիրությունների և քննարկումների, հետևողական լինել քաղաքացիների բոլոր հարցերին լիարժեք ու հստակ հիմնավորումներով պատասխանելու, հնարավորության դեպքում՝ դրանց օպերատիվ լուծումներ տալու հարցում, և պարբերաբար ներկայացնել ամբողջական տեղեկատվություն, նաև առաջարկություններ:

4. Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանը ներկայացրեց վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև մարզի համաճարակային իրավիճակը և սուր շնչառական վարակների դինամիկան հունվար ամսվա կտրվածքով, հայտնեց, որ հունվարի 31-ից մեկնարկել է ջրծաղիկի դեմ պատվաստումների իրականացման գործընթացը՝ փուլային եղանակով, և այդ պատվաստումը պետության կողմից ներդրվել է առաջին անգամ:

Մարզպետը հանձնարարեց.

ա) Մարզում հակահամաճարակային իրավիճակը պահել խիստ վերահսկողության տակ և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն.

բ) Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել առողջապահական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքների մակարդակի բարձրացման, շփումների և այցելությունների անցկացման, հիվանդացածության տվյալներին տիրապետելու, բժշկական կազմակերպություններում տիրող մթնոլորտին ու որակի մակարդակին առնչվող տեղեկատվությունը ներկայացնելու ուղղությամբ:

5. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Մատինյանը ներկայացրեց վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը անդրադարձավ Համահայկական ձմեռային 2-րդ խաղերի մասնակցության և արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև մարզի դպրոցներում հիվանդության հետևանքով բացակայություններին և հեռավար ուսուցմանը վերաբերող տեղեկություններին ոչ լիարժեք տիրապետելու և ներկայացնելու հարցերին ու հանձնարարեց լինել առավել հետևողական՝ աշխատանքների ճիշտ կազմակերպման, իրազեկվածության, տեղեկատվության տիրապետման և ներկայացման ուղղությամբ:

6. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացված աշխատանքների մասին տեղեկատվություն, մասնավորապես հայտարարված և հայտարարվող շինարարական մրցույթների ժամկետների ճշգրտման և ֆինանսավորման հարցերի վերաբերյալ:

7. Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջա-նառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կ.Ադամյանը ներկայացրեց մարզպետի աշխատակազմում հայտարարված թափուր պաշտոնների մրցույթների վերաբերյալ տեղեկատվություն:

8. Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը հանձնարարեց.

ա) Մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին, Հ.Ավետիսյանին, մարզպետի խորհրդական Ն.Թովմասյանին, մարզպետի օգնական Հ.Հակոբյանին, մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Տրված բոլոր հանձնարարականների կատարման նկատմամբ դրսևորել անձնական և անհատական պատասխանատվություն, սահմանված ժամկետներում և կարգով գրավոր հաշվետվություններ ներկայացնել և հետևողականություն դրսևորել բարձրացված հարցերի ամբողջական և լիարժեք լուծման ուղղությամբ:

բ) Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզի համայնքների բազմաբնակարան շենքերի բակերում ինքնակամ կառույցների և ապօրինաշինությունների վերացման, բակային տարածքների զավթման, ապօրինի հողազավթումների և այդ տարածքների ոչ նպատակային օգտագործման ուղղությամբ, կատարված աշխատանքների և արդյունքների մասին պարբերաբար զեկուցել:

գ) Մարզպետի օգնական Հ.Հակոբյանին՝

Շարունակել հանդիպումները Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված քաղաքացիների հետ, պլանավորելով նաև շաբաթվա ընթացքում 1-ական հանդիպում Վանաձորում և Տաշիրում՝ պետական և համայնքային շինություններում բնակվող անձանց հետ: Բարձրացված հարցերին տալ կոնկրետ լուծումներ, ներկայացնել գրավոր հաշվետվություն, դրանում ներառելով յուրաքանչյուր հանդիպման մասնակիցների, բարձրացված հարցերի, դրանց համատեղ քննարկումների և լուծումների վերաբերյալ տեղեկատվություն:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2025-02-05 12:02:08 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99